

Հայոց ցեղասպանությանը պատճառված կորուստները

Վնասի հաշվարկ 100 տարի անց

Ցեղասպանությունն այնպիսի ծանր ոճրագործություն է, որ անգամ 100 տարի անց դժվար է գնահատել նրա ավերածությունները: Այդ ավերածության զգալի մասը հնարավոր չէ վերականգնել՝ սպանված ազգեր, կորած սերունդներ, արմատախիլ արված համայնքներ, կողոպտված հայրենիք, ոչնչացված մշակութային ժառանգություն, բռնազավթված ունեցվածք և թալանված բնական ռեսուրսներ:

Սույն վերլուծությունը նվիրված է հայոց ցեղասպանության հարյուրամյակին: Սա ավելի շուտ ոչ թե իրավապահանջ է, այլ վերլուծություն, որն ընդհանուր սահմաններով ուրվագծում է պատճառված կորուստը, այն համոզմունքով, որ վնասի չափի ավելի լավ գիտակցումը կօգնի առաջ ընթանալու ուղիների որոնմանը: Շատ երկրներ և տարբեր շահեր դերակատարում են ունեցել հայոց ցեղասպանության իրականացման մեջ և էլ ավելի շատերը վերջին հարյուրամյակում իրենց սեփական արտաքին քաղաքական և տնտեսական նպատակներն առաջ մղելու համար օգուտ են քաղել Հայկական հարցի և հայոց ցեղասպանության շահարկումից:

Անգործությունն ու անտարբերությունն արմատավորում են այն պատկերացումը, որ ցեղասպանությունը շահավետ գործ է: Սա անընդունելի է, քանի որ այդպիսով ցածրացվում է բարբարոսության դեմ խոչընդոտը ողջ մարդկության համար:


Հանցագործությունը կիսադատապարտված և անհատույց թողնելը ցանում է անկայունության և խառնակության սերմեր: Հարևանները պետք է ի վիճակի լինեն ապրելու կողք-կողքի առանց իրենց անցյալի կողմից հալածվելու:

Առաջ ընթանալու ուղին պարզ է: Վերականգնելի վնասը պետք է վերականգնվի: Անվերականգնելի վնասը պետք է փոխհատուցվի: Սա է այն առաջարկը, որն արվեց հայկական պատվիրակության կողմից 1919թ. Փարիզի խաղաղության վեհաժողովում և որը տակավին ի գործու է մատնանշել առաջ ընթանալու ուղին:

1919 թվականին քննարկվող բանաձևն իրենից ներկայացնում էր հայրենիքի վերականգնման և հայ ժողովրդի կողմից կրած անվերականգնելի կորուստների փոխհատուցման համակցությունը: Փոխհատուցման գնահատականները ելնում էին այն կանխադրությից, որ հայերի հայրենիքը՝ Սև ծովից մինչև Միջերկրական ծով պետք է վերադարձվի հայերին: Սակայն, ինչպես հայտնի է, ո՛չ անվերականգնելի կորուստները փոխհատուցվեցին, ո՛չ էլ հայրենիքը վերականգնվեց:

Ստորև բերված աղյուսակներն իրենցից ներկայացնում են 1919թ. հատուցման պահանջի արդիականացված տարբերակը: Թեպետ կորուստների մի մասն ակնհայտորեն անվերականգնելի է, այնուհանդերձ վերականգնելի և անվերականգնելի միջև սահմանը հաճախ սուսկ քաղաքական կամքի խնդիր է: Ուստի ստորև բերվող աղյուսակներում վերականգնելի և անվերականգնելի վնասի զանազան համակցությունները ներկայացվում են վնաս պատճառած կողմերի միջև խիստ մոտավոր մասնաբաժիններով: Այդ գնահատումները չեն հավակնում դառնալ այն 20 միլիոն հայերի չկայացած արարումների հաշվարկ, որոնք կապրեին ցեղասպանությունը չլինելու դեպքում:

Ժամանակին հայերի ցեղասպանության հարցով համապարփակ և արդար կերպով չգրադվելը մարդկության վրա շատ թանկ նստեց: Ճիշտ ժամանակին արդար լուծում ստանալու պարագայում, գուցե հնարավոր լիներ խուսափել նոր պատերազմներից, կանխել ցեղասպանությունները և պատմությանն այլ ընթացք տալ: Հետագա դանդաղումը ծնում է նոր կորուստներ: Հայերը անհատապես մասամբ վերականգնվել են հարյուր տարի անց: Սակայն մարդկության համար հատուցման չարժանացած հայոց ցեղասպանությունը դեռևս խոչընդոտ է մնում ավելի խաղաղ և քաղաքակիրթ ապագայի կերտման հարցում:



Ցեղասպանության կորուստները	=	Վերականգնելի վնասներ	+	Անվերականգնելի վնասներ
		Հող, իրավունքներ և սեփականություն		Ոչնչացված բնակչություն և գույք
				Հետաձգված վնասներ

Restitutio ad integrum-ը գոհերի կորուստների հաշվարկի միջազգային չափորոշիչ է: Դա նշանակում է ամբողջությամբ վերականգնել գոհերի այն վիճակը, որում նրանք կլինեին, եթե չլիներ ցեղասպանությունը:

- ❖ *Վերականգնելի վնասները ենթակա են վերականգնման:*
- ❖ *Անվերականգնելի վնասները ենթակա են փոխհատուցման:*
- 1919թ. **Փարիզի հաշտության վեհաժողովին** ներկայացված պահանջը 19 մլրդ \$ ֆրանսիական ֆրանկ էր: (1919 ֆրանս. ֆրանկ, արծաթյա մետաղադրամներ, ներկայիս արժողությամբ \$2.18/ֆր = 42.5 մլրդ.): Սա չի ներառում հետաձգման վնասները:

Համեմատության համար. 1919 թ. մինչ այսօր ԱՄՆ դոլլարը արժեվորվել է մոտ 20 անգամ՝ 20 x \$42.5 մլրդ = \$850 մլրդ: Սա չի ներառում ուղղակի կամ անուղղակի վնասները և բաց թողնված օգուտները:

- **Հետաձգման վնասները** հաշվարկվել են օգտագործելով ներկայիս արժեքը, ինչպես նաև դրամի և ունեցվածքի արժեքը ժամանակի մեջ, ինչը ներառում է նախնիների հայրենիքը մուտք գործելու հնարավորությունից զրկելը 100 տարով, մշակութային ժառանգության պահպանման հարցում խափանումները, ոճրագործությունը ժխտելու, արդարադատության ուշացման և ազգային հարստության և հայրենիքի թալանին ակնհաստես լինելու հետ կապված զգացմունքային կսկիծը:
- **Անվերականգնելի վնասն** ընդգրկում է 1919թ. հետո ընկած ժամանակաշրջանում մարդկանց կյանքի, շարժական և անշարժ գույքի կորուստը, պատճառոված վնասվածքների և 1919-1923թթ. փախստականների պահպանման ծախսերը, ոչնչացված և պղծված մշակութային ժառանգությունը, բնական հարստությունների և տարանցիկ ուղիների օգտագործման դիմաց եկամուտների կորուստը, թալանված ունեցվածքը, որը չի հաշվարկվել 1919թ. Փարիզում ներկայացված պահանջի մեջ, Թուրքիայում գտնվող հայերի դեմ շարունակական խտրականությունը, ճնշումները և հալածանքները, ինչպես նաև մեզ հայտնի բնական հարստությունների (հանքանյութեր և այլն) հաշվարկված եկամուտները և շրջափակմամբ ու դեպի ծով ելք չունենալու պատճառով Հայաստանի առ այսօր կատարած ծախսերը:


1919թ. խաղաղության բանակցություններում որդեգրված մոտեցման համաձայն, երկրի **տարածքները** և դրանց հետ կապված ունեցվածքը դիտարկվում է որպես բնեղեն փոխհատուցում դրամական հաշվարկով կորուստների դիմաց և ընդհակառակը:

- **Վերականգնելի Վնասներ.** Այսպիսով երկրի տարածքների և ունեցվածքի վերականգնումը նվազեցնում է անվերականգնելի և առայժմ չհատուցված վնասի փոխհատուցման չափը: Հողային արժեքը ներառում է զանազան իրավունքներ, ելք դեպի ծով, զբոսաշրջություն, հանածոները երկրում և ավիամերձ գոտում, ջրային պաշարները (ներառյալ էլեկտրականության արտադրությունը և ջրի գյուղատնտեսական օգտագործումը), բերրի հողատարածքները, բարեխառն գոտիները, ապառազմականացված անվտանգության գոտիները, կենսաբազմազանությունը, որը պահպանվել և զարգացվել է հայերի կողմից, ինչպես նաև նախնիների սրբավայրերն ու մշակութային ժառանգությունը:



- Փարիզի Խաղաղության Վեհաժողովի Հայկական Պետություն (Փետրվար 1919)
- Վիլսոնյան Հայաստան (Նոյեմբեր 1920)
- Հայաստանի Հանրապետություն (Հունիս 1919)
- Հայաստանի Հանրապետություն և Արցախ (2015)

Պատճառած վնասների և քաղած օգուտների բաշխումը



- **Թուրքիան**, քրդերի հետ մեկտեղ, հայերի ցեղասպանության իրականացնողն էր: Թուրքերը գլխավոր շահառուն են և ոճրագործության պատշաճ հատուցման ձգձգման հիմնական պատճառը:
- Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի դաշնակից **Գերմանիան** մեղսակից էր հայոց ցեղասպանության ծրագրավորման և իրականացման մեջ: **Ավստրո-Հունգարիան** Գերմանիայի և Թուրքիայի դաշնակիցն էր համաշխարհային պատերազմում և չմիջամտեց ցեղասպանության կանխման հարցում:
- **Ռուսաստանը, Անգլիան, Իտալիան և ԱՄՆ-ը**՝ յուրաքանչյուրը նպաստել են այն պայմանների գոյացմանը, որոնք պատճառ հանդիսացան հայոց ցեղասպանության համար: Այդ երկրները չմիջամտեցին ցեղասպանության կանխմանը, իսկ ավելի ուշ առևտրի առարկա դարձրեցին հայոց ցեղասպանության պատշաճ հատուցումը, իրենց սեփական տնտեսական և աշխարհաքաղաքական շահերի հետ կապված խնդիրները լուծելով Հայաստանի շարունակական ավերման և հայ ժողովրդի և մշակույթի ոչնչացման հաշվին:
- **Իսրայելը, Անգլիայի և ԱՄՆ-ի** հետ մեկտեղ շահել է Հայոց ցեղասպանության ճանաչման հետաձգումից, օգտագործելով այդ վիճակը որպես նպաստավոր գործոն ու լծակ **Թուրքիայի** հետ առևտրային, ներդրումային, ռազմական և աշխարհաքաղաքական գործարքների հարցերում՝ ի հաշիվ հայոց ցեղասպանության զոհերի:

- **Թուրքիան, քրդերը և Գերմանիան** պատճառեցին ուղղակի վնասի մեծ մասը և/կամ անմիջական օգուտներ քաղեցին հայկական ցեղասպանությունից, իսկ **Անգլիան, ԱՄՆ-ն, Ֆրանսիան և Ռուսաստանը** ստացան անուղղակի օգուտներ: Ավելի ուշ շրջանում հատուցման ձգձգմամբ հասցված վնասը հիմնականում կապվում է **ԱՄՆ-ի, Անգլիայի և Իսրայելի** հետ:
- Վերականգնելի վնասի վերականգնման և անվերականգնելի վնասի դիմաց փոխհատուցման ընդհանուր գումարը, հայկական տարածքներն անգամ նվազագույն չափով վերադարձնելու պարագայում, կազմում է մոտ 3 տրիլիոն (ԱՄՆ դոլար): Եթե այդ գումարը մարվի տարիների որոշակի ժամանակահատվածում, ապա այն չի գերազանցի հայկական ցեղասպանությունն իրականացրած և դրանից շահ ստացած պետություններից որևէ մեկի համախառն ներքին արդյունքի մի փոքրիկ մասը և կարող է իրականացվել հիմնականում ապագա դրամական հոսքերի հաշվին: